ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հուլիսի 2025 թվականի № 270-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԳԱՐՆԱՆԱՑԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԱՆՑԿԱՑՆՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մարտի 27-ի № 356-Լ որոշման հավելվածի 21-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության 2025 թվականի հուլիսի 2-ի № 03/14915-2025 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի համայնքների գարնանացան մշակաբույսերի ցանքատարածություններում մոնիթորինգ իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

1) ***Ռուզան Մարտիրոսյան*** - աշխատանքային խմբի ղեկավար, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ,

2) ***Հովհաննես Մարգարյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ,

3) ***Միհր Դավթյան*** - Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության բուսասանիտարիայի և ագրոքիմիական հետազոտությունների բաժնի մարզային ագրոնոմ *(համաձայնությամբ)*:

2. Մոնիթորինգն իրականացնելիս մասնակից դարձնել նաև տվյալ համայնքի պատասխանատուին *(համաձայնությամբ)*:

3. Աշխատանքային խմբին՝ մոնիթորինգն իրականացնել *2025 թվականի հուլիսի 15-ից 30-ը* ներառյալ:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ *Արմեն Հակոբյանի* վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

2025 թվականի հուլիսի 10
ք. Հրազդան